

## ՀԵԳԵԼԸ ԵՒ ՆՈՐԸ ԺԱՄԱՆՈՎԸ<sup>1)</sup>

ԲԵՌԼԻՆԻ համալսարանի մէջ կարդացած Հայմի դասըթ: Թարգմ. Սօլնանիկովի - Ս.Պ.Բ. 1861.

ԳԱՂՈՒԱԾՔ ԵՒ ՄՏԱՆՈՒԹԻՒՆՔ

Առ ալժմ, ես ալսչափ միայն զիտեմ, որ կորցվածը պէտք է փնտոել, երբ որ ալդ բոլորը ձեռք դալ, այն ժամանակի մարդը թող հոգալ և ստեղծէ ինչ որ իրեն պէտք է. ես ինչ խմանամ թէ ինչպէս կը լինի մարդու հասկացողութիւնը հարիւր տարի ետքը, որ հիմիկուակ դատողութիւն անեւման մասին: Նախնիք որ կորցնում էին, միթէ ալդ կորուստը միշտ զգալի էր. քաւ լիցի, շատ կորուստներ, որ ալժմ մեր հասկացողութեան կորուստ են, նոցա աշքում եղած են որպէս մշասակար բաների մերժողութիւնք, և գիտէին նոքա, որ մեղանից հարիւր տարի ետքը նոցա ժառանգները արիւնքրտինքով պիտի աշխատեն վերստին որպէս մի կորած բան փնտուել ինչ որ նոքա կամքով թուլութեամբ կամ անխունեմութեամբ մերժել ու չնշել էին:

Վերջը:

Վերջը, խելքդ գլուխդ հաւաքիր, աշքդ բաց և տունդ քամիին բացած լոկ գաղափարների ետքից ման մի գար:

Գրանովսկին իր քննութեան մէջ Geschichte der Denk und glaubensfreiheit im ersten Jahrhundert der kaiserherrschaft des Christenthums von Ad. Schmidt. Berlin, 1847, (Դաւանութեան և մտքի աղատութեան պատմութիւնը կաւսերութեան և քրիստոնէութեան առաջին դարում. Աղ. Շմիտ. Սոբրանի համար) Տ. 2 ստր. 276)

«Անպէս է սովորական և ըստ մեծի մասին արժանի» (ալդ

<sup>1)</sup> «Լումար» 1902 թ. № 5

սովորութեան, ալսինքն չկարդացուելու և անտես լինելու) ճակատագիրը գերմանական գրքերի: Չնայելով որ անդադար ուսումնասիրումէն հին օրինակները (ալսինքն հին հեղինակները) գերմանական ուսումնականք չեն ուսել առնուլնոցանից գեղեցիկ և կենդանի ծնով աւանդելու գաղտնիքը: Այս պատճառով, շատ անդամ պատահում է նոցա խօսիլ լունական արուեստի լաւիտենական գեղեցկութեան մասին ախպիսի լիզուով (ալսինքն ձեռվ), որ կարող է հարկադրել երկրախել թէ ալդ արուեստը կարող էր աղղեցութիւն ունենալ իր պաշտողների ճաշակի վրա: Ծիծաղելին ան է, որ շատերը այս ձեր հետ վարվելու կատարեալ տղիտութիւնը վերադրում են գերմանիկ ցեղի աւելի հիմնաւորութեան: (Cründlichkeit)

## Երես 284

Սենեկան խոստովանումէ իւրաքանչիւր մարդկալին անձին սբրութիւնը. homo res sacra.... «Ամեն մարդ ազնիւ է, որպէսնուն առաջանում է Աստուծուց. եթէ քու ազգաբանու. թեան մէջ կալ մի մութ աստիճան, անցիր նորա վրալից, կանգնիր բարձր: Վերանցիր դէպի ազնութեան աղբիւրը. դէպի այն, որից մենք ամենք առաջացել ենք. մենք ամենք Աստուծու. ծով որդիք ենք»: Այս խօսքերի մէջ հնչում է քրիստոնէութեան նախազգացութիւնը. Հռովմէական ցիրկի արիւնուտ տեսարան. ները զարթեցնում են նորա մէջ նոյն զգացմունքը, որ հեռացնում էր ալդ տեսարաններից առաջին քրիստոնեաններին: Նա դառնում է դէպի թամաշաւորքը գառն խօսքերով «Առանց բարկութեան, առանց երկիւղի, զրոսանքի համար, դուք մահի տալիս էք մարդը և հրճում էք նորա հոգեվարական տիրութեամբ: Դուք կասէք ինձ, թէ նոքա լանցաւորք են և մահի արժանի դատվածք: համաձայն եմ: բայց ինչ լանցանք էք գործել դուք ինքներդ, որի համար դատապարտվել էք ականատես լինել մահապարտութեան»:

Ասես թէ իրաւունք ունին մինչ կարծում են թէ Հեգելը իր փիլիսոփայութեամբ կամենում էր Գերմանիոլ Մաքիավելին լինել և իրաւ որ ինչպէս նորա վարդապետութիւնը համեմատվելով դէպիքերին կերպարանափոխ է լինում ինչպէս վերջինը ջնջում է առաջինը: Բայց ֆլորենտացի պուպլիցիստը, մեզ թւում է թէ աւելի խոր յտածէ իր առջեց դրած գաղափարի մէջ, աւելի համարձակ հաստատութեամբ բռնել է ամեն կողմից իր առջելի ինդիրը, Հեգելը իր քաղաքական ասպարէզը

«Գերմանիան տէրութիւն չէ ալլ ևս երեմիականով, աւարտեց եր ընթացքը անգլիական կառավարութեան ընդդէմ անհիմն զեղեկութեամբ։ Զարմանալի է ալս կողմից նմանութիւնը Հեղեղի և անգլիացի Բօռքի միմեանց հետ, Բօռքը իր ծերութեան ժամանակ, մանաւանդ ընկճուած իր որդու մահի կակծի տակ չկարողացաւ կլեկ Ֆրանսիոյ մնծ աեվօլիւցիօն։ Բօռքը որ իր բարոր կեանքը և ոլժը մինչև ալս ժամանակ թափել էր աղատութիւն պաշտպանելու համար, չվախենալով նորա կերպարանքներից, Բօռքը որ իւր հալրենիքի անձնական օգուտը երկու ձեռքով զառում էր ամերիկեան անկախութեան, որի մէջ աղատութեան նախապաղապարը ունէր մի հզօր վաստարան երեսփոխանական պարատի մէջ, իր հոգու վերջին կարողութիւնքը ամենալի ուժգնութեամբ գործ դնելով Ֆրանսիոյ ւղղափոխական շարժողութեան խաչակիր արշաւանք քարողեց Փրանսիական աղգի ընդդէմ։ Նա հիւանդ էր ալն ժամանակ հոգեաչս, որդու կորուսար զդրդել էր նորա ուղեղը, ուստի և նորա աչքի առջն երեսում էին միախն Լուգովիկոսի XVI-ի և Սարիա Անտուանէտոի արիւնոտ գլուխները, ալդ դարձել էր նորա համար անշարժ գաղափար (idea fix) նա էլ չէր լիշում Լուգովիկոս XIV բռնակալութիւնքը, որ շարունակ 50 տարի ոչ միայն քայլեցին Ֆրանսիոյ արիւնը և հոգին, ոչ միայն իրը փօխանակեցին անառակ և փատաճն կեղեկի հետ, ալլ և հանգիստ չտուին բոլոր երասպալին, նա մոռացել էր թէ ինչպէս ալդ փառամոլ և Բորբորիտոն ճակածնութեան վարակւած Բուրբոնը ամեն կողմից վկասում էր Անգլիային երբ կարողոս ան Յակոբ Ստիւարտները Լուգովիկոսի արծաթագին վասսալներ դառնալով մանաւանդ ալս վերջինս նենգում և զաւում էին Անգլիոյ աղատութեան։ Նա մոռացել էր բուրբոնների (Լու.դ. XIV և XV) հետամտութիւնքը և ճգտողութիւնքը Վիլհելմ Օբրոնֆեանի ընդդէմ, և պաշտպանութիւնքը նախ ապարքալ Յակոբ 11-ին և վերջը նորա որդուն, որ 70 տարի թագ խնդրելով թափառեցաւ մուրացկանութեամբ։ Բօռքը էլ չէր լիշում, թէ ինչ որ Լուգովիկոս XIV-ը սկսել էր, XV-ը շարունակել էր, աւելցնելով իրեն անառակութիւնքը շռալութիւնքը և Փրանսիական աղգի հարստահարելը, նա մոռացել էր, որ XVI նոցանից ոչ միայն պակաս, ալլ և աւելի էր անցել ամեն չափ ու կշիռ և Փրանսը գների համբերութիւնը եթէ ապառած լինէր չէր կարող դի-

մանալ որ չպատռէր, նա էլ չէր լիշում Անգլիոյ քաշածները  
Կարողոս 1-ի ձեռքից, չէր լիշում երկարն—պառլամենտը, քա-  
ղաքական պատերազմները և ալապէս անվանված պոչի (եր-  
կարն պառլամենտի մնացորդքը) լրբութիւնքը: Բոռքի ժա-  
մանակ անգլիացիք ազատ չունչ էին քաշում, ազգի ազատու-  
թիւնը վաշուց ահա դրած էր Սլրիօնի պատաժների վրայ:  
Նա միախան մէկ խօսք ունէր մահ ֆրանսիական անասուած-  
ներին, մահ թագաւորասպաններին, մահ ապստամբներին:

Գերմանական ազգը մեծ ազգ չէ և նորա փոքրութիւնը  
և մեծութեան անընդունակութիւնը արդէն իրողապէս երևում  
է նորա քաղաքական կեանքում պարզ և շօշափելի կերպով:  
Երեսունից աւել կտորներից բաղկացած նեղսիրտ և միմիան  
ֆրանսիական մեծ լեղափոխութեան շնորհքով մի փոքր մարդ  
գարձած կառավարութիւններով, մթնացնում է այն լուսակա-  
մարը, որ կապել էին նորա վրայ Գէօթէն Շիլէրը, Լութե-  
րը: Չնչին և ափի չափ տէրութիւնքը իրենց մէջ կենտրոնա-  
ցած իրենց կնիքը խոր տպաւորում են իրենց հպատակների  
վրայ, որոնց թող կրօնական ալլ և ընկերական կեանքի  
թշնամութիւնքը, մանր և կեղաոտ դիպուածներում միշտ  
ոտնհար են եղել և պիտի միշտ լինին գերմանականութեան:

Ընկած լինելով ալսպիսի խեղճ վիճակի մէջ իրողապէս,  
զերմանիկ ոգին իր ելքը աշխատեցաւ փնտուել անպատող ի-  
գէալների մէջ և մինչեւ ալսօր չպակասեցան բերանաբաց փի-  
լիստիաներ որ քառի կուլ տալով իդեա քարոզեցին առանց  
արդ սքանչելի լոդէան երբ և իցէ իրենց համար մարմնաւորել  
կարողանալու: Իրաւունք ունի հռչակաւոր Բօկլը զատապար-  
տել նոցա ալս նեղսիրտ ըստ էութեան, բայց գերմանական  
հասկացողութեան լայն և հոլակապ ուղղութիւնը: Եւ միան  
Բօկլը չէ որ դատապարտեց ալս սուտ ուղղութիւնը: Ամեն  
խելքը գլխին մարդ, որ գարեջրի շոգիներով չէ բթացրել իր  
ուղեղը, ասել է ուրեմն և զգում է երբ երես առ երես քսվում  
է իրական աշխարհի հետ, նա դատապարտել է և պիտի դա-  
տապարտէ: Չնայելով ալս բոլորի վերայ, երբ Հեղելը քաղաքից  
քաղաք իր սքանչելի մտահակեաց գիտութիւնքը կարգալով  
ման գալուց լետոյ վերջապէս Բեռլինի մէջ 1830—1831 վեր-  
ջին անգամ կարդում էր պատմութեան փիլիսոփակալութեան  
մասին, Ֆրանսիոյ ուեզօլիսցիօնի ուումբը վերստին տրաքեց:  
Ֆրանսիական վուլկանական բնութեան ցնցիւնը մէկ գիշերվաւ

կմէջ կործանեղ Բուրբօնի գահը, որ դաշնակիցների քաղաքա-  
անութեամբ և պաշտպանութեամբ վերանորողվել էր մեծ-  
լեղափոխութիւնից իստոր. Անարեկութիւն տարածեց ամեն տեղ  
ալս ցնցիւնը և Հեղեկը ընկճիցաւ ալս երկիւղի ծանրութեան  
տակ, ինչպէս Բոռքը Ընկճել էր իր որդու մահի ծանրաթեան  
տակ.

Շատ զեղեցիկ նկատում է Հալմը Հեղելի թուլ լարը նա-  
ասում է ակարելի է նորան չարչարում էր մի նախազգացու-  
թիւն թէ ալդ տիեզերական նոր շարժողութիւնը տարածուե-  
լով առաւել և առաւել կարող է ճամփից հանել ոչ տէրու-  
թիւնը ալև համակարգութիւնը—իդէալիզմի համակարգու-  
թիւնը».

Եւ արգարե երկիւղը, թէ համաշխարհական հանգստու-  
թիւնը զարձեալ կը խանգարվի, հանգիստ չէ տալիս Հեգե-  
լին. Շարժողութեան ոգին մտաւ նաև Անգլիա, որ անլողողով  
պահպանել էր իր կառավարչական ձևերը և առաջին ֆրան-  
սիական լեղափոխութեան ժրբիկը ցամաքացողի մէջ անքան  
դէպքեր պատճառելով անվաս անցել էր նորա զիլից.—Վե-  
րանորոգելէք—ասում են Ռոսսելի բարեկամքը—որ կարողա-  
նաք պահպանել. տենդալին ամբոխմունքով խոնվում է աղջը  
պալամենտի գուներում, որ կարողանալ ստանալ թերևս ուժի-  
գործադրութեամբ կամակոր տօրիների համաձայնութիւնը  
ազգալին երեսփոխանական համակարգութիւնը վերանորոգելու  
համար. Տեսնելով ալս, Հեղեկը նորից պուլիցիստ է դառնում.  
Նա հրատարակում է Պրուսիոլ տէրութենական լրագրում իր  
վերջն հատուածը «Անգլիական վերանորոգութեան խնդրի  
վրա քննութիւն անունով Bill of Reform».

#### 14 օգոստ:

Անա ամս ջոդուածի մէջ Հեղեկը նմանում է հալիցինա-  
ցու մէջ ընկած Խօռքին, Հալմը ալսպէս է խօսում այս հա-  
տուածի վրալ. «Այս հատուածի մակարդը է երկիւղը, թէ տէ-  
րութեան վերականգնեալ վիճակը կարող է խանգարվել. իսկ  
ալդ կարծիքը աւանդելու եղանակի մէջ տեսականի ծալրակեղ  
իմաստակութիւնը (γνησιαնε) խառնվում է պրուսական աս-  
տիճանաւորի անուրջների (meatæ) հետ. Հեղեկը չէ պախարա-  
կում ձգտողութիւնը և վերանորոգութեան խնդրի (bill) բռ-  
վանդակութիւնը, ալլ զատապարտում է նորն իսկ վերանորո-  
գութեան հակամիտութիւնը, որովհետեւ վտանգ է տեսնում ալդ

բանի մէջ, Անգլիական տէրութիւնը գտնվում է—եթէ հաւատանք գերմանական փիլիսոփակի խօսքերին—այնպիսի դրութեան մէջ, որ նա ամեն ուրիշ աւելի բարուքում է պահանջում, բայց միննուն ժամանակ ամեն ուրիշից պակաս է ընդունում նորան: Մանրամասնութեանց՝ խոր լարգութեան արժանի գիտութեամբ, Հեղելը ցոլց է տալս անգլիական կառավարչութեան ստոլդ թերութիւնքը, Առանց պալմանի պիտի համաձանել կրիտիկոսի (Հեղելի) հետ ամեն բանի մասին ինչ որ նա ասում է. որինակի համար անճոռնի անդրանկական (մայօրաթիւ) կառավարութիւնը, հոգեսոր ծուխերի անկարգութեանց և ուրիշ տեսակ արտօնութեանց, անգլիական եկեղեցու դրութեանց անճոռնի կառավարութեան իրլանդիոյ և նորա անտեսական և ընկերական լարաբերութեանց մասին: Ինչպէս Հեղելը, նոյնպէս ոչ ոք չի պաշտպանիլ—թողնելով ալդ իրաւունքը չնշին հնապաշտների—դարերի ժանգը, որ ալլանդակում է անգլիական կառավարութիւնքը. Տակաւին կարելի է համաձանել և ալս բանում, թէ անգլիական կառավարչութիւնքը (յարեցնելու) երեսցնում են մի հանլող հաւաքորդ ստորասական սահմանադրութեանցո, որի հակառակ, նոր տէրութենական կառավարչութեանց ներքին աճելութեան լարանի սկզբանց վրայ հիմնված աւելի պարզ ձևերը, գոնէ տեսական լարաբերութեամբ կարող են համարվել որպէս առաջադիմութիւն:

Այս խօսքերում, պ. Հալմը մնապէս սխալվում է. և գորա պատճառն է դարձեալ գերմանական փիլիսոփակութիւնը. Նորա որպէս առաջադիմութիւն ընդունած ապարզ ձևերը», որ հիմնված էին նոր տէրութենական կառավարչութեանց ներքին աճելութեան վրայ, ինչ արդիւնք ցոլց տուեցին երբ գործ դրվեցան: Ստոլդ է, որ պ. Հալմը ինքն էլ զգում է ալդ բանի գործական ամլութիւնը ուստի և սահմանափակում է առաջադիմութեան ասպարէզը ագոնէ տեսական լարաբերութեամբ» խօսքով. Զարմանալի է որ չկամրն հասկանալ թէ մի փոքր թերի բայց գործադրելի ձեւ աւելի նախընտիր է քան թէ զաղափարական կատարեալը որ բոլորովին անգործադրելի է: Հայտ ընտիր զաղս փար. բայց որ չես կարող նորան մարմնացնել, չես կարող գործ դնել օգուտը ինչ է: Բայց պէտք չէ մոռնալ, որ գերմանական չոր գաղափարի գերի փիլիսոփակութեան իջնելու կէտն է ալս: Ես անհամ կե-

բակուր եմ ուսում փիլիսոփան չէ հաւանում և իր մտքի մէջ աւելի համեղ կերակրի գաղափար ունի և ասում է թէ դոնէ տեսական լարաբերութեամբ ինքը ուզիղ է որ հաւան չէ իմ հացին, Դէս սատկեցէք քաղցած, Անգլիան իր կառավարութեան ստգուանված ձեռքով, ալսօր առաջինն է Եւրոպիու մէջ ազատութեան մասին, և անգլիական մարդը իրաւամբ կարող է պարծենալիր ազատութեամբ, մինչդեռ ուրիշները և մանաւանդ խեղճ ողորմնի գերմանացիք ցեխում խրված նախանձու տրաքում են և տակաւին հաւան էլ չեն Անգլիալին։ Տօ, մի նորա չափ ազատութիւն ձեռքդ բեր կետու խօսիր է. զարաքաղցու ասածը չլինի ըրտիին հաշիրու Բալց մենք շուտով կը հասնենք ան թթվուտին որի տեսութիւնը միայն պրծացնում է գերմանացու շապիքը։ Նա չէ կարող տանել կամ տեսնել երբ և իցէ կամ ուր և իցէ «հանրապետական տարր» սահմանադրութեան մէջ, նորանից վախում է գերմանացին ինչպէս ազռաւը խրտուիլակից առանց քննելու թէ այդ երեսիթը ամենեին անվնաս է, եթէ գործ է դրվում միայն որպէս զուգականող տարր ընդդէմ նեղուիրա գրականութեան։

«Բալց» շարունակում է Հալմը, որպէս թէ սթափելով և հետեւալ դրութեամբ իր առաջգալ կարծիքները հիմն ի վեր կործանելով—ըսակցու—ասում է նա, չչէ կարելի եւ եակալի աւելի միակողմանի դատողութիւն քան թէ այն, որ բացառոցար հիմնված է անգլիական տէրութենական կեանքի ալս մութ կողմերի վրայ, և դոցա պատճառով չէ ուզում տեսնել նորա մէջ շրջան առնող ազատ ուժերի հարստութիւնը։ Այս տեղ վերստին կատարվում է մեր խօսքը, թէ ազատութեան կենդանի գործողութիւնը (պրոցես) մեր փիլիսոփալի համար, ըստ ինքեան ոչինչ արժէք չունի և թէ նա (Հեգելը) դորա հակառակ տեսնում է ազատութեան բոլոր արժանաւորութիւնը հասկացողութեան համակարգութենում և առարկալապէս (օնթետիկո) կազմակերպված, լալտնի կարգի մէջ բերված թէև անաղատ, դիւանապետական (ծարօղրագուց) պօլիցակազմ ազատութեան մէջ»։

Յալտնի է թէ, ազատութիւնը խսպառ կործանել նախադասութիւնը համազօր վերը մէջ բերված երկար բարակ ճառախն, թէ ինչպէս է Հեգելի կարծիքը ազատութեան մասին։ Ինչ որ Հալմին է վերաբերվում, նա ասես թէ մի սառնութիւն է զգում իր մարմնի մակերեսութիւն վրայ, որ տարածվում

Ք երբ լիշում է ալս տեսակ փիլիսոփալական ալլանդակութիւնքը և անմիջապէս մերժելով նորանց, աշխատում է թուղացնել անախորժ տպաւորութիւնը ալդ ժանգոտ գաղափարների թէ իր և թէ լսողի վրալ:

«Հասկանալի է»—շարունակում է Հալմը,—թէ ինչ խորհուրդ պիտի վերադրել Հեգելի սահմանադրական շնորածին և նորա պատահաբար ինքնավարութիւնը (самоуправление) լարզելուն: Ոչ մի տեղ ինքնավարութեան սկզբունքը չէ հասել մինչև ալդ աստիճան պարունակութեան (объект) արդպիսի մեծութեան և դորա հետ միասին ոչ միտեղ, ալդ չափով և արդպիսի ուժով չեն երևել նորա օրհնած հետևանքը ինչպէս անգլիական պառլամենտականութեան մէջն, և վերջնու խոստովանեցաւ գոնէ Հալմը, թէ և մի փոքր առաջ համաձայնում էր թէ անգլիական սահմանադրութիւնը «անլօդ հաւաքոլթ է ստորասական սահմանադրութեանց»:

Հեգելի կարծիքով, ալդ պառլամենտականութիւնը շահմարան է պօլիտիկական ապականութեան և անխելքութեանու: «Զեւսոր ազատութեան աղաղակը և փալլը» ասում է սքանչելի փիլիսոփան—թոլլ չէ տալիս ոչ ստոր ազատութեանը անել և ոչ իսկ լիշել նորան: Ազատութեան դիմակի տակ գոլացել է շահասէր և ազահ օլեգարխիա, որ գործակից էր եղել (օգնել էր օգնութեան ամենեին գարշելի հանրապիտականութեան!—(15 օգոստ.) «Ստորասական արտօնութիւնքը ժժամանակի թանձրութեամբ արմատացած եսականութիւնը և ռամենից աւելի ազգի բազմութեան անհասկացողութիւնը, Հնոլնպէս և խաժամուժ ամբոխի ախտերը, անա այն տարերքը, որոնցից բաղկացել է անգլիական սահմանադրութեանց պիտանքը»:

«Անգլիական պառլամենտի մասին Հեգելի դատողութեանց «մէջ, լիքը չափով կարելի է նկատել նորն սահմանափակութիւնը, նորա նախապաշարմունքներով, և նորն հոգեկան ախտաւոր ամբոխմունքը, որ լատուկ բնաւորութիւն է տալիս «ապօլիտիկական կուսակցութեանց դատողութեանցը, երբ նոքախօսում էին իրենց հակառակ կուսակցութեանց սասին: Պրուասական դիւանապետականութիւնը միաւորված գերմանական գողափարականութեան (idealistem) հետ կուսակցութիւն է կազմում անգլիական տէրութենտական կարգադրութեանց և քիչոնի հալրենակցաց գործական—էմպերիկական խորհրդի:

«Ընդդէմ» ինչպէս կուրմարկեան կիսասպան (յօնքեր) զատո-  
«ղութիւնք է անում ամեն ոչինչ բանի վրա, նոլնպէս է Հե-  
սկելի դատողութիւնքը անզիմական աղատութեան հիմական  
սկզբանց մասին, Հերիք չհամարելով, ընտրողութեան և կա-  
շառելու պատճառով առաջացած ամբոխմունքի և անկարգու-  
թեան ամնասաստիկ Կտրուկ գծերով նկարագրութիւնը, նա  
«մինչ անգամ խօսւկցութիւնքը (առաջարկութիւնքը և դիմա-  
«ղրութիւնքը) և պառլամենտական ճռուերը համարում է որ-  
պէս չնչին փոխանակիչը հմաստութեան, որ նստած էր կա-  
ռանաչ մահուդի առջն և որ երեցնում էր իր ենթակալութիւնը  
«հրովարտակների (ՁԵՐԴ)» ահագին բաղմութեան պատրաստու-  
թեամբ, ինչպէս մի հրօվարտակների գործարան Արդ ժողովք-  
ների մէջ ժամանակի մեծ մասը անցնում է, անդամների ի-  
շրենց անձնական դրութեանց բացատրութեամբ, և նոքա ա-  
ռաջարկում են իրենց կարծիքները ոչ որպէս զործին պատ-  
ականաւոր անձինք, ալլ որպէս արտօնունակ (որպալեցիրօվան-  
աննան) գոլութիւնք և որպէս ատենախօսք. Արդ ատենաբաննե-  
րի գեղեցկախօսութիւնը «անձնագովութեամբ լիքը դատար-  
«կարանութիւն է»—միան խելացի լալտարարութիւնքը այն-  
պիսի մարդերի ինչպէս է Դուքս Վելլինգտոնը ողորմութիւն-  
«են գտնում Հեգելից».

Մեզ շատ հասկանալի է, թէ ինչի համար Դուքս Վելլի-  
նգտօնի լալտարարութիւնքը հանդիպում են Հեգելի լարգու-  
թեան «Վելլինգտօնը իրըն զօրապետ և ռազմագէտ (ստրատեգիք)»  
ալո՛, ունի հոլակապ արժանաւորութիւն. բայց պատերազմի  
զաշակից դուրս, մօրդկալին և ընկերական լարաբերութեանց  
վերաբերութեամբ, նորա տեսութիւնքը, հասկացողութիւնքը և  
հալեացքը փոխադարձ չափով (որպօրույթ) փոքրանում են և  
մօտենում այն աստիճան ոչնչութեան, որ նաև մի շատ հասարակ  
քաղաքագէտ և շատ հասարակ պուալիցիստ չէին կարող  
առանց ամաչելու արտաքրել իրենց բերնից այն խօսքերը,  
ինչ որ գրված էին Դուքս Վելլինգտօնի լալտարարութեանց  
մէջ, նա զրականապէս ընդդէմ էր ամենալն վերանորոգութեան  
և պատերազմական զրական կարգերը (ՃԱԾՈՊԱԼՈԱ) շատ խոր  
տպաւորութիւն աւած լինելով մեծ զօրապետի ուղեղի վերալ  
զարձել էին նորա համար ՏԻՆ զա ոռ, նա կարծում էր թէ  
ինչպէս պատերազմի լաջող ելքը շատ դիպուածում կախվում է  
գնդի անձան հնազանդութիւնից, այնպէս ևս մարդկալին

կեանքը աւելի լաջող ընթացք կունենալ եթէ այն ռազմա-  
կան փիլիսոփալութիւնը ընկերական և բարերար սկզբունքնե-  
րի տակ կերպարանիւղով հիմք դառնան տէրութենական  
սահմանադրութեանց կալմուածքին:

՚Ի հարկէ ինչպէս ուրիշ շատերը և մանաւանդ Դուքս  
Վելլինգտոնը առատօրէն քաղաք լինելով իր սկզբունքների  
արդիւնքը պատերազմի դաշտում, մոռանում են, թէ պատե-  
րազմը մարդկալին կեանքի մէջ, բնական, սովորական երևոլի  
չէ, այլ ցաւագարական և պատահական, որի օրէնքը երբէք  
չէ կարող դրվել մարդկալին սովորական և ընկերական կեանքի  
վրայ, առանց վնաս տալու ալդ կեանքի բնական առողջու-  
թեան և առանց պատուաստելու այն ցաւագարական ախտերը  
նորա կազմուածքի մէջ։ Պատերազմում մի ժամ, մի րոպէ  
հերիք են շատ անգամ դարաւոր լուսեր ոչնչացնելու, աշ-  
խարհի զուգակշխուը խանգարելու համար և ալդ մի ժամը  
կամ րոպէն կարող է և լարմարութիւն ունի Զերի այն զլված  
վիճակում դրական հնագանդութիւն գնվիլ։ Զինուորը դուրս է  
եղած իր ընկերական կեանքի շրջանից. նա ընկերական և  
քաղաքալին կեանքի մէջ պաշտօն չունի. նա այն միջոցին  
ճնշված է նեղ շրջանակի մէջ և որոշված նպատակով—մեռցնել  
կամ մեռնել։

Բայց այնպէս նեղ, որոշեալ և սահմանափակ չէ մարդ-  
կալին կեանքի առողջ վիճակը. Զինուորը միայն թշնամու  
հետ կարող է դարձվիլ. ուրիշ ոչինչ պէտք, ոչինչ լարաբերու-  
թիւնք ոչինչ վիճակ չէ կարող նորան պատահել. Խոկ մարդ-  
կալին առողջ կեանքը իր լայն ճանապարհի վրա ամեն վայր-  
կեան զրկվում է անթիւ պէտքերի, անհամար լարաբերութեանց  
և վիճակների հետ. Յալտնի է թէ ալս երկու մօմնտքը պատե-  
րազմը իրբե ցաւագարական (պատոլոգիչեան) և առողջ կեանքը  
իբրև բնիկ սախագաղափարական (հորմանական) երբէք չեն  
կարող միւնուն լարով չափվիլ, միւնուն ուղղութեամբ քալել,  
առանց անօդուտ և վնասակար դառնալու. Բայց ինչ անես, որ  
չեզելի պէս մարդը փրկութիւն է տեսնում բռնական ֆրիդրի-  
կոսների ձեռքով զարբնած շղթափի մէջ քան թէ այն սահ-  
մանադրութեան որ միմիան անդիմական մարդը կարողացաւ  
իրագործել և որին լաջորդեց ուրիշ կերպարանքով նորա գաղ-  
թական եղբալը հիւսափալին ամերիկեան դաշնակցութիւնը.

ՄԻԿԱՑԵԼ ՆԱԼԱՆԴԱՆ

(Վերջը հետեւսակ համարում)